ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ (USAID ՄԶԳ) «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

13.03.2023 17:35

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID ՄԶԳ) Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի» պատվիրակությանը՝ ծրագրի ղեկավար Մարկ Լասսմանի գլխավորությամբ:

Ողջունելով միջազգային գործընկերների այցը, Սիմոն Բաբայանը բարձր է գնահատել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությունը Հայատանի մի շարք ոլորտներում իրականացվող բարեփոխումներին, մասնավորապես՝ դատաիրավական բարեփոխումներին ուղղված:

Ծրագրի ղեկավար Մարկ Լասսմանը շնորհակալություն է հայտնել Փաստաբանների պալատի նախագահին՝ հյուրընկալության համար և խնդրել ներկայացնել այն մարտահրավերները, որոնց փաստաբանները հանդիպում են դատարանների հետ առնչվելիս:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ընդգծել է էլեկտրոնային արդարադատության միասնական կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտությունը, ինչպես նաև այլ քայլեր, որոնք էապես անհրաժեշտ են ՀՀ դատաիրավական համակարգի զարգացման համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են առաջնահերթ հարցերն ու ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից դրանց աջակցելու հնարավորությունները:

Հանդիպման ավարտին կողմերը երկուստեք շնորհակալություն են հայտնել և ձեռք բերել պայմանավորվածություն՝ շարունակական դարձնել այս հանդիպումները՝ համագործակցության և երկխոսության ճանապարհով ցանկալի արդյունքների հասնելու համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })